**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 195-Ա**

**16 հուլիսի, 2020 թվական**

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1844-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հուլիսի 15-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել տնտեսվարողների հետևյալ հասցեներում իրականացվող գործունեության շրջանակում նոր անձանց (այցելուների, հաճախորդների) ընդունումը և սպասարկումը.

1) «Ռոբնան» ՍՊԸ՝ ք. Ջերմուկ, Շահումյան 26.

2) «Լիլիթ Կարախանյան» Ա/Ձ՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 7/1.

3) «Սարգսյան Հենրիկ» Ա/Ձ՝ ք. Ջերմուկ, Շահումյան 10/1.

4) «Նարեկ հանգստյան տուն» ԲԲԸ՝ ք. Ջերմուկ, Մելիք Ադամյան 2:

2. Սույն որոշման 1-ին կետով նշված տնտեսավարողներին ձեռնարկել միջոցներ արձանագրված խախտումները անհապաղ վերացնելու ուղղությամբ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 16/07/20 15:44:50 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**